

«Արագածոտնի մարզպետարանի
գեներալային հարցերով զբաղվող
մարզային հանձնաժողովի
նիստի 21.03.2014թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Տեղի ունեցավ գեներալային հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի նիստ՝
հանձնաժողովի նախագահ «Արագածոտնի մարզպետի տեղակալ Ն.Մովսիսյանի
ղեկավարությամբ:

Օրակարգ

**«Արագածոտնի մարզպետի կողմից սահմանած «Լավագույն համայնք՝ գեներալային
հարցերի լուծման ուղղությամբ» մրցանակաբաշխության մարզային
փուլի արդյունքների ամփոփում**

/ Զեկուցող՝ հանձնաժողովի քարտուղար՝ Գ.Դանիելյան/

Մասնակցում էին հանձնաժողովի անդամներ՝

Ա.Հովսեփյանը- մարզպետարանի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ

Ա.Թադևոսյանը- մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և
սոցիալական ապահովության վարչության պետի ժամանակավոր
պաշտոնակատար

Գ.Դանիելյանը- մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և
երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ

Ս. Զորյանը- մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և
հասարակայնության հետ կապերի բաժնի պետ

Վ.Գևորգյանը- մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և
սոցիալական հարցերի վարչության սոցիալական բաժնի պետ

Գ.Եղիազարյանը- Աշտարակի քաղաքապետի առաջին տեղակալ

Ս.Բարնջյանը- ՀՕՄ Աշտարակի մասնաճյուղի ատենապետուհի

Հանձնաժողովի անդամ Պ. Համբարձումյանի փոխարեն նիստին մասնակցել
է մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի
վարչության կրթության բաժնի պետ Ս. Պետրոսյանը:

Օրակարգի հարցի կապակցությամբ հանդես եկավ հանձնաժողովի քարտուղար տիկին Գ. Դանիելյանը:

Նշվեց, որ տեղական ինքնակառավարման մարմիններում գենդերային հավասարության ապահովման բնագավառում «վարչապետի ամենամյա մրցանակի շնորհման կարգի համաձայն ս/թ մարտի 10-ին մրցանակաբաշխության մասին հայտարարությունը և հայտը տեղադրվել են մարզպետարանի կայքում: Հանձնաժողովին են ուղարկվել 20 համայնքապետարանների կողմից լրացված հայտերը, նախորդ տարվա ընթացքում գենդերային ուղղվածությամբ միջոցառումների ցանկը և համառոտ նկարագիրը: Ներկայացվեց, որ մրցանակաբաշխության պայմանների համաձայն մարզային հանձնաժողովը պետք է ընտրի լավագույն երկու քաղաքային և երեք գյուղական համայնք: Ելույթով հանդես եկան Ն.Դավթյանը, Ս.Հովսեփյանը, Գ.Եղիազարյանը, Ս.Բարնջյանը:

Կարևորվեց 2013թ. ընթացքում մարզի քաղաքային համայնքներում ավագանու որոշմամբ գենդերային հարցերով զբաղվող հանձնաժողովների ստեղծումը, որը խթանել է գենդերային ուղղվածության ծրագրերի իրականացմանը և դրական օրինակ է գյուղական համայնքների համար: Առանձնապես դրական աշխատանք է կատարել Աշտարակի քաղաքապետարանի հանձնաժողովը:

Օրակարգի հարցերի քննարկումն ամփոփեց մարզպետի տեղակալ Ն.Մովսիսյանը:

Հանձնաժողովը որոշեց՝

1. «**«Լավագույն համայնք՝ գենդերային հարցերի լուծման ուղղությամբ» մրցանակաբաշխության** մարզային փուլում որպես լավագույն քաղաքային համայնքներ ընտրել Աշտարակ և Թալին համայնքները, իսկ **լավագույն գյուղական համայնքներ՝** Կարբին, Իրինդը և Զովասարը:

Հանձնարարել

1. Հանձնաժողովի անդամ Ս.Զորյանին՝ հանձնաժողովի կողմից ընտրված համայնքների ցանկը և միջոցառումների համառոտ նկարագիրը տեղադրել մարզպետարանի կայք-էջում:


2. Հանձնաժողովի քարտուղար Գ. Դանիելյանին՝ կազմված արձանագրությունն ուղարկել տարածքային կառավարման նախարարություն:

Հանձնաժողովի նախագահ՝



Ն.Մովսիսյան

Հանձնաժողովի քարտուղար՝



Գ.Դանիելյան